

խառութեան հետ այն ժամանակ երևան կը գայ այս դործի բոլոր ծանրութիւնը. իսկ թէ ի՞նչ չարիքներ կը յատաճանան այս ձեռք անհատական քարոյականութեան աւանդումներէն, զիւրին է զուշակել. եթէ փիլիսոփայութիւնն այսօր չունի մի ամէնից բնորոշուած քարոյագիտութեան սխալմամբ արդեօք ի՞նչ պիտի ուսուցանեն ժողովրդական գպրոցի ուսուցիչները բարոյագիտութեան անուան տակ:

Դ Լ Բ Ս Ի Մ .

Եյս անգամ ինձ առաջնորդ բռնելով Մօքսի պատմաբան Չարսանճագ գաւառացի Մինաս բարաբը, հարեանցի կերպով կը ներկայացնեմ Դէրսիմի տեղագրութիւնը, քիւրդ և հայ ժողովրդեան կենցաղավարութիւնը:

Դէրսիմի որ Բարձր Հայոց արեւմտեան մասն կը բռնէ, բարձր և կզգիացած գիրք ունի, երեք կողմից ջրեր պատած են, և յարեւելից Բիւրակեան լեռներու շղթան ընդհատած է:

Դէրսիմի հիւսիսային և հարաւային ստորոտներից յարեւմուտս կը հասնի Նփրատի երկու մեծ ծիւղերն և այդ երկրի վերջաւորութեան վերայ՝ Չմշկածագի խոնարհ իրար կը խառնուին:

Եյս երկու ծիւղերից Բարձանին որ Մշոյ գաւառից անցնելէն և Ճապաղ-Ջրի խառնուելէն յետոյ կը քերէ Դէրսիմի հարաւային ստորոտներն, Բալուայ-ջուր անուամբ անցնելով Բալուայ, Փերինայ, Բերգակի և Չմշկածագի սահմաններէն և զորս աջ թողլով կը խառնուի Սև ջրի, նաև այս ընթացքի մէջ ի ձախ կը թողու Խարրերգու գաւառն:

Դէրսիմի հիւսիսից կանցնի Սև ջուրն. այս ջուրն իւր ընթացքի մէջ աջ ափին վերայ կը թողու Մամսխաթուն (Դերջան), Երզնկայ, Կամախ և Զամարա. Դէրսիմի արեւմտից պատած է Սև ջրի շարունակութիւնը, որ Փնկեանէ խոնարհ ուղղուած է ի հարաւ-արեւելս մինչև Բալուայ ջրի խառնուրդն: Սև ջուր որ և այս ընթացքի մէջ Ակնայ ջուր կատարի, ձախ եղբին վերայ կը թողու Փնկեանի աջին վերայ Ակն և ձախին վերայ Չը մշկածագ:

Եյս երկու ջրերու միջավայրն բարձր գիրք մի բռնած է Դէրսիմի ունի ընդարձակ տարածութիւն որ կերկարի յարեւելից յարեւմուտս 5—6 աւուր ձանաղարհ, ըստ ամենայնի լեռնային և մեծ մասամբ անտառապատ:

Դէրսիմի հարաւային ստորոտներն, այն է Բալուայ ջրի աջ եղբին վերայ տարածուած են Բալուայ, Բերնայ, Բերգակի և Չմշկածագի գաւառներն, որք մեծ մասամբ հայ են, իսկ արեւմտեան ստորոտներն Փնկեանի, Կամախ, Ակն և Չմշկածագի մէկ մասն բռնած են. սոքա ևս մեծ մասամբ հայ բնակիչներէ կը բաղկանան, մասնաւոր ինչ հայ-հոռոմներ:

Դէրսիմի շղթան ուղղակի յարեւելս Մնձուր, Տուժիկ, Ղզըլ-քիլիսէ, Ազքան, Հէյթան լեռներէ կաղմուելով՝ կը հասնի Բիւրակն:

Դէրսիմի միջէն երկու մեծ ջրեր ի հարաւ կը խոնարհին, մերձ Փերինայ իրար կը խառնուին, ապա Փերինայ ջուր անուամբ և Մուրատի մեծութիւնը առնելով Աւսեկու մօտ կը խառնուի Մուրատի:

Փերինայ ջուրն Բիւրակն լեռան արեւմտեան հիւսիսային կողերէն սկիզբ կառնէ, նախ յարեւմուտս հոսելով կը մտնէ Դէրսիմի, Դէրսիմի արեւելեան հարաւային կողերն քերելով՝ ի հարաւ արեւմուտս կը հոսի ցխառնուրդ Մուզուրայ. երկրորդն Մզուրայ կամ Մնձուրայ ջուրն, որ Դէրսիմի արեւմտեան ծայրէն կսկսի՝ նախ ի հարաւ արեւելս կը հոսի, ապա հարաւ կիջնայ ցխառնուրդ Փերինայ. այս ջուրն Փերինայ ջրի չափ մեծութիւն և երկարութիւն չունի, սակայն պտոյտ կրտայ բուն Դէրսիմի մէջ:

Դէրսիմի որպէս կերէի, հինգ կառավարչեան մասի կը բաժնուի երկրի բնական գիրքին համեմատ, որոց երեքին մէջ կը նստին գայմագամներ, իսկ միւս երկու մասն գեռ թուրք կառավարիչներու երես տեսած է:

Դէրսիմի լեռնային հինգ բաժանման մէջ վեր ի վերոյ կը հաշուեն 60,000 հրացան կրող քրդեր, ոմանք այս թիւը կը հաստատեն. ըստ իս 40,000 հրացան կրող քիւրդեր միշտ պատրաստ են. ամբողջ քիւրդ բնակչաց թիւը 100,000էն կանցնի:

Դէրսիմի լեռնային մասի մէջ կը գտնուին նաև քանի գիւղերու մէջ 350 տան չափ հայեր, որք քիւրդերու հետ շփուելով մեծ մասամբ մոռացած են իւրեանց մայրենի լեզուն, քիւրդերու նման կեանք վարելով քաջարար գիմաղրած են շատ անգամ թշնամոյն. այս հայերն Միւրակցի անուամբ կը կոչուին:

Աւթուռամեայ Մինաս իւր հօրից լսած է որ Դէրսիմի վերայ միշտ թուրքեր պատերազմ մղած են և ամէն ժամանակ յաղթուած՝ առանձին առանձին ժամանակներու մէջ լազեր, ենիշերիներ, առնաւուաներ ևլն. ձմեռած են Չարսանճագ հայերու մօտ, յարձակում գործած են Դէրսիմի վերան և յաղթուած:

Այս քիւրդեր Ղալլաշ կը կոչուին, մահմա-
տական չեն ունին մասնաւոր ինչ քրիստոնէական
սովորութիւններ, թիւրքեր Ղալլաշ անուն կրտան
իր անարգանք, որպէս քրիստոնէաներուն գեաւոր
կամ քեաֆիր (անհաւատ), որով թիւրքի և զղը-
լաշի մէջ մեծ թշնամութիւն կայ:

Արեւի աւելի մահմականութեան դարձնե-
լու համար օսմանցիք պատերազմ մղած են քիւր-
դերու դէմ, քան թէ հպատակեցնելու:

Գէրսիմի լեռնային մասն, որպէս ասացի,
հինգ գլխաւոր բաժանում ունի, իւրաքանչիւր բա-
ժանման վերայ հարեանցի ակնարկ մը կը ձգեմ
այստեղ:

Ա. Օփաճուխ որ Գէրսիմի արեւմտեան ծայրն,
Պոլսոյ ջրի սկզբնաւորութեան վերայ գաւառ մի
է, Փինկեանի արեւելեան բարձրութեան վերայ
բարձր դիրք ունի, 35—40 ցիւղ զղըլաշ քիւրդ
բնակչաւ: Սորա կէս հպատակ ժողովուրդ են, այս-
տեղ միւսեր կը նստի կառավարութեան կողմից,
մէջն կը գտնուին բաւական թուով առևտրական
հայեր, Գէրսիմի մէջ այս վայրն Երիզայի մօտ լի-
նելով առևտրի համար այստեղ կը գիւմէ ժողո-
վուրդն:

Այս մասին մէջ հայ բնակութիւն չկայ, սորա
արեւելեան սահմանի վերայ որ մի աւուր ճանա-
պարհ հեռի է, կայ հաւաքում, որ և սուրբ Կարա-
պետի վանքը, ուր վանահայր վարդապետ մի կը
նստի, կառավարելով քիւրդերու տրոք, Աւանքին
կից է վանքի գիւղն, որ 25 տան չափ հայերէ բաղ-
կացած է, որք Միւրաքցի քաջ ցեղին յատուկ են:

Այս վանքը մեծ յարգանք ունի ամբողջ Գէր-
սիմի մէջ, հեռաւոր վայրերէն այստեղ ուխտի կը
գան հայեր և քիւրդեր, զոհ և պատարագ մատու-
ցանել կրտան, ժողովուրդի (քիւրդ) յարգանքը այս
վանքի վերայ մեծ է, եթէ մէկը ուխտեց վանք
գնալ, ձեան, թշնամու և կամ մի այլ առթիւ
չյաջողեցաւ գնալ, եղած տեղն կը դառնայ այդ
վանքի կողմն, առջևը վանքի անունով մի քար կը
ցցէ, 100 կամ 200 քալ յետ կը գնայ, ապա շո-
քելով ծնկի վերան, կուգայ և այդ քարն կը համ-
բուրէ, կրկին անգամ ետ ետ գնալով որոշեալ տե-
ղի վերայէն գուրս կը գայ:

Հաւաքում վանքի շուրջն ոսկու հանքեր կան,
քանի անձեր կը հաստատեն թէ ի վաղուց վանքի
գիւղի Միւրաքցի հայեր ոսկի հանած, զրամ կտրած
են, այսօր ևս այդ զրամներն կան և խիստ մեծ են:

Բ. Տուժիկ որ Օփաճուխէն մէկու կէս աւուր
հեռաւորութիւն ունի դէպի յարեւելս, սա կը հա-
մարուի բուն Գէրսիմ և Գէրսիմի ամենամատակ
մասն է. Տուժիկի մի մասն ևս կը կաղմէ Ղուծի-
գէրէսին, ուր մինչև ցայսօր օսմանցիքի մի ոտը

մտած չէ և ամբողջ բնակ մի ևս չէ կարող
մտնել, Տուժիկ միշտ պատրաստ ունի 2,000—
3,000 հրացանաւոր քիւրդեր, սա Գէրսիմի ամե-
նապահով վայրն լինելուն՝ ամէն կողմէ այստեղ
գիւմած՝ ապաստան գտած են կառավարութեան ձեռ-
քէն հալածուած քիւրդեր, կաղմած են քաջաց
աշխարհ մի:

Գերջանու, Երիզայի և Փինկեանի կողմից
Տուժիկ անհպելի է, միայն ի հարաւոյ Խոզաթու
կողմից մի ճանապարհ կը բարձրանայ, մի աւուր
հաղիւ հասնի, ի հիւսիս բարձրանալով միշտ:

Գ. Փախ որ Տուժիկէն մի աւուր ճանապարհ
ի հարաւ-արեւելս կընկնի, Զարսանձագի հիւսիսա-
յին բարձրութեան վերայ ընդարձակ լեռներու մէջ
մի մեծ տարածութիւն ունի. 40—45-ի չափ քիւրդ
գիւղերով կէս հպատակ ժողովուրդ մի կը կաղմեն,
որք Ալանցի ցեղին յատուկ են, Փախ գիւղի մէջ
զինուոր կը նստի, Ալանցի ցեղի գլխաւորն Կու-
լապի աղա անուն մի աղդեցիկ քիւրդ էր, Գէր-
սիմցոց վերջի անպատմութիւնից յետոյ այդ ա-
ղան Երիզացի Կիրակոս Էփենտի (երեւի Գաղան-
ձեան) միջնորդութեամբ հպատակած է օսմ. կա-
ռավարութեան, որով Կուլապի աղային գաղմագա-
մութիւն և պատիւ տրուած է, այժմ Փախի գա-
ւառի գայմաղամ է յիշեալ Կուլապի աղայի որ-
ւատի որոյ տունը Զուխուր գիւղն է, ինքը Մեղ-
կերտ նստելով կը կառավարէ զԱլանցիս:

Թուէս 7—8 տարի առաջ 100 զինուոր միայն
կար Փախայ մէջ:

Փախայ գաւառի 2—3 գիւղերու մէջ կան
50—60 տուն հայ, Զուխուրի մէջ 15 տուն են հա-
յեր, որ Միւրաքցի են և քաջ, սորա զիրենք հայ
թագաւորաց ցեղից սերած կանուանեն. Տէր-Ուման
գիւղին մէջ ևս 15 տուն են, նոյնպէս Միւրաքցի,
Տէր-Ուման Ղալլ-բիլիսէի և Փախայ միջավայրն է,
Էքըղ գիւղի մէջ 2 տուն անուանի Միւրաքցի հա-
յեր կան:

Միւրաքցի հայեր շատ քաջ, պարզ և միամիտ
ժողովուրդ են, որոնցմէ կաննածին քիւրդեր և
Զարսանձագի թիւրք բէկեր, այս հայ ժողովրդի
միամտութեան և տիմարութեան վերայ Զարսան-
ձագի հայերն յօրինած են բաղմամբիւ առակներ,
առասպելներ, որոց քանին պատեհ առթիւ պիտի
ներկայացնեմ:

Գ. Ղալլ-բիլիսէ, սա ևս մի աւուր ճանա-
պարհ յարեւելս է Փախայ և շատ բարձր, այստեղ
բաղմամբիւ լեռներու մէջ զեւեղուած են 60-ի
չափ բրդական գիւղեր, որք յարեւելից սահմանա-
կից են Անդուայ (Բղի) վիճակին, այստեղ ևս գայ-
մագամ կը նստի, Ղալլ-բիլիսէ գիւղաքաղաքին

մէջ կան 20 տուն հայեր, ուր ևս օսմ: զինուոր կը նստի:

Ազըլ-քիլիսէի սահմանի վերայ 10 ժամ յարեւել, կայ Հարտիւ հայարնակ գիւղն որ մօտ 250 տնէ կը բաղկանայ:

Ե. Աղքան որ Դերսիմի հինգ բաժանումներէ ամենէն մեծն է, Դերսիմի արեւելեան հիւսիսն, որ կայ բուն Դերսիմի և Դերջանի մէջ տեղն, Դերսիմի այս մասին բնակիչներն են Իզզլցի ցեղն, որոց վերայ իբրեւ ցեղապետ կիշխէ ի վաղուց հօշակուած Շահ-հիւսէին բէկն, որ մինեղն ժամանակ կառավարութեան կողմից գալմագամ նշանակուած է, տէր է նաև Աղքանի չորս աղահանքերու: Դերսիմի Աղքանի մասին մէջ մօտ 400 գիւղեր կան, Շահ-հիւսէին բէկ իւր մօտ 100 զինուոր կը պահէր իւր ծառայութեան մէջ գործածելու համար: Դերսիմի այս լեռնային մասի մէջ կան նաև 10-ի չափ փոքրիկ հայ գիւղեր, մօտ 160 տուն:

Բացի Դերսիմի Աղքանի մասէն, Շահ-հիւսէին բէկ նաև Դերջանու կողմն ունէր 100-ի չափ գիւղեր, որոց մեծ մասն հայեր են, իւրաքանչիւր գիւղ մեծ թուով բնակիչներ ունի, օրինակ վերին Բագահիճ մօտ 1000 տուն, վարի Բագահիճ 200 տուն ելն:

Դերսիմի արեւմտեան ծայրից (Օփաճուխէն) Աղքանը ձիգ վեց աւուր ձանապարհ է. Աղքանէ արեւելեան հարաւ մի աւուր ձանապարհ է Բիլի, Բիլիէն ի Կարին արեւելեան հիւսիս 3 աւուր ձանապարհ, նոյնչափ է նաև Աղքանէ Դերջանով ի Կարին, Վերոյիշեալ Դերսիմից հինգ բաժանման լեռն կը տարբերի իրարմէ, շատ անգամ իրարու անհասկնալի գաւառաբարբառներ կը գործածեն:

Դերսիմի մէջ ձիպանցի ցեղ մի կայ: որոնցից 100 հրացանաւոր հաղիւ գուրս գայ, բայց սորա ամբողջ Դերսիմի մէջ մեծ տնուն հանած են իրենց քաջութեամբ, որոցմէ չորս հօգի շատ անգամ և երկար միջոց օսմանեան 150 անձէ բաղկացեալ զինուորաց զիմադրած են. շատ անգամ ևս իրենց թշնամեաց զէմ պատերազմած և յաղթած են:

Դերսիմ, որպէս ասացի, լեռնային և խիտ անտառապատ է, բնակիչները վարժուած են հետիոտ անհպելի ժայռերու վերայ ման գալ, ոտով կարող են թշնամոյն առջեկէն խոյս տալ կամ յարձակում գործել, ձի ասուած բանը հաղիւ ուրեք կը տեսնուի, այն ևս բէկերու մօտ:

Դերսիմից կրօնաւորներն տէտէներն, շէյխերն և սէյիտներն են. սոքա զէնք չունեն, մի ցեղի, այն է Կուռուշանցոց ցեղին կը պատկանին և մեծ յարգանք կը վայելին ժողովրդեան մէջ, ամբողջ Դերսիմի մէջ տարածուած են, ամէն տեղ մեծ յարգանք ունեն, գրեւ կարգաւ չեն գիտեր. երկու


իրարու թշնամի և արիւնարբու ցեղերու մէջ կը միջնորդեն, կը հաշտեցնեն, նոցա խօսքն ժողովրդեան մէջ իբրեւ Աստուծոյ պատգամ է. Կուռուշանցոց բուն բնակութեան վայրն մերձ Մեզկերտու, Մզուրայ ջրի ձախ ձողան է և 60 տուն կը լինին, Ոչ որ ձեռք չէ կարող սոցա վերայ բարձրացնել:

Տէտէներն ևս ըստ Դերսիմից սպիտակ կտաւէ շոր կը հագնեն, որոնցից միայն կը տարբերին նրանով որ գլուխին կապոյտ ֆաս կը գնեն, վերան խաշաձե կազմա կը կապեն:

Դերսիմից կրօնական արարողութիւնը, պահ կը և թաղումը կը կատարէ տէտէն կամ սէյիտը, Բոխչի (տարտղան) ծառերուն, որ աւանդութիւն ունին, յարգանք կը մատուցանեն, հայ վանքերն ուխտի կը գնան. երբ նեղն ընկած են Խզըր (ս. Սարգիս) կը կանչեն, Մնտամոս ժայռի գաղաթից բղխած աղբիւրին մեծ յարգանք կը մատուցանեն. այդտեղ ուխտի կը գնան, ջրով կը լուացուին:

(Կը շարունակուի)

Ս. Հայկունի.



Մ Ե Ն Բ Ե Լ Ի Ի Բ .

Առողջ ապահովութիւնը ֆրանսիական զօրքի մէջ. Ս. Պետերբուրգի ВРАЧЪ ԲՅԷԼ. շարաթաթեթը նետեմալ տեղեւութիւններն է հաղորդում Մաղազասկարում եղած Ֆրանսիական զօրքի առողջապահական վիճակի մասին, քաղելով այդ տեղեւութիւնները Ֆրանս. Annales d'hygiène publique հանդիսից:

Մաղազասկարի արշաւանքի ժամանակ թշնամիներէց սպանուած է 7 հոգի, վիրաւորուած 94, հիւանդութիւններէց մեռել են 6,000 հոգի, 5,111 հոգի եղել են 15,000 հոգի: Ազգային ժողովում պատերազմական նախարարը ստիպուած է եղել խոստովանելու, որ այդ տուկի թուերը նետեմալ են այն անհոգութեան, որով զինուորական վարչութիւնը վերաբերուել է առողջապահութեան տարրական պահանջներին և այն ցուցմունքներին, որ առաջուց արել են բժիշկները: Այսպէս տնչով բռնուած զինուորները, զանազան զոտունքի խայթելուց յառաջացած վէրքեր ոտներին, փոքով ևս միջատներով ծածկուած, նարատուրութիւն չեն ունեցել շոր փոխելու կամ անպնտով լուացուելու: Ընայելով որ տնչող սատակի տարածուած է եղել զօրքի մէջ, բժիշկները քննազրեթէ չեն ունեցել:

Հիւանդ զինուորները թափուած են եղել վրաններում, մինչ սպաններ ընկուել են կարգին տներում: Միակ պատերազմը որ այս կողմից կարող է համեմատուել Մաղազասկարի արշաւանքի հետ, այդ St.-Domingue-ի պատերազմն է, որի ժամանակ գնեթալ Leclerc-ի 60,000 հոգուց բաղկացած զօրքը գրեթէ ամբողջապէս կոտորուել է զինուն տնչոց լնտիւեան կողմէն: 4 ամսուան ընթացքում զինուն տնչոց մոտէ է 30,000 հ., իսկ մնացեալ 40,000-ից, 7 տարի յետոյ Ֆրանսիա են վերադարձնել ընդամենը 500 հոգի: